ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

CENTRE FOR POLICY STUDIES

Համիկ Փայտյան, Արմեն Գրիգորյան

Ապատեղեկատվության դեմ պայքարի գործում ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացումներն ու արդի վիճակը

Զեկույցը պատրաստվել է «Մեդիագրագիտության խթանումը լայն հանրության շրջանում» ծրագրի շրջանակում, որն իրականացվել է Քաղաքականության հետազոտական կենտրոնի և գերմանական «Ճգնաժամային մոդելավորում՝ հանուն խաղաղության» կազմակերպության կողմից՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ:

© Քաղաքականության հետազոտական կենտրոն

Երևան 2025

Հասմիկ Փայտյան, Արմեն Գրիգորյան

Ապատեղեկատվության դեմ պայքարի գործում ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացումներն ու արդի վիճակը

Նախաբան

Այս զեկույցը նպատակ ունի ներկայացնել, թե Հայաստանի և Եվրոպական միության միջև համագործակցությունն ինչպես է գործում մեր երկրում ապատեղեկատվության դեմ պայքարի համատեքստում՝ հաշվի առնելով ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) դրույթներն այս ոլորտում:

Զեկույցում անդրադարձ է կատարվում Հայաստանում ապատեղեկատվության տարածման հիմնական ուղղություններին և հոսքերին, Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային ռազմավարության դերին և ազդեցությանը, Եվրոպական միության ընդունած կարգավորումներին՝ ընդդեմ ապատեղեկատվության տարածման և, ԵՄ-ի օժանդակությամբ Հայաստանում իրականացվող ծրագրերին և նախաձեռնություններին:

Ապատեղեկատվության տարածումը ժամանակակից աշխարհի ամենահրատապ մարտահրավերներից մեկն է, որը սպառնում է ժողովրդավարական արժեքներին, հասարակության կայունությանը և անվտանգությանը, ինչպես նաև տեղեկատվության հավաստիությանը: Այս համատեքստում Եվրոպական միությունն առաջնորդող դեր է ստանձնել ապատեղեկատվության դեմ պայքարի միջազգային ջանքերում՝ մշակելով ռազմավարական ծրագրեր և գործիքներ ինչպես իր անդամ երկրների, այնպես էլ գործընկերների համար:

Այս զեկույցի նպատակն է ուսումնասիրել ԵՄ-ի քաղաքականությունը ապատեղեկատվության դեմ պայքարի ոլորտում և գնահատել դրա ազդեցությունը Հայաստանում:

ՀՀ-ԵՄ համագործակցությունը՝ Հայաստանում ապատեղեկատվության դեմ պայքարի գործում

Ապատեղեկատվության տարածումը լուրջ վտանգ է ներկայացնում ժողովրդավարական հաստատությունների և հասարակական համախմբման ու անվտանգության համար: Հայաստանի համար, որն անցում է կատարում ավելի ժողովրդավարական կառավարման և թափանցիկության, ապատեղեկատվության դեմ պայքարը թե ազգային առաջնահերթություն է, թե միջազգային գործընկերների, հատկապես՝ ԵՄ-ի հետ արդյունավետ համագործակցության ոլորտ:

1. Ապատեղեկատվական հոսքերը Հայաստանում

Վերջին տարիներին, հաշվի առնելով արցախյան պատերազմը և շրջափակումը, COVID-ի համավարակը, ռուս-ուկրաինական պատերազմը, Հայաստանի ընտրական գործընթացներն ու այլ ներքաղաքական իրավիճակներ, ապատեղեկատվության տարածումը գնալով ահագնանում է, դրա դեմ պայքարի

մեխանիզմների ու մեդիագրագիտության զարգացման կարևորությունը՝ առավել ընդգծվում:

Հայաստանում ապատեղեկատվությունը տարածվում է մի շարք ձևերով և ազդում է տարբեր ոլորտների վրա: Սոցիալական ցանցերը, մասնավորապես՝ Facebook-ը, X-ը (Twitter) և Telegram-ը, դարձել են ապատեղեկատվության տարածման հիմնական հարթակներ: Այդ գործում ակտիվ մասնակցություն են ունենում նաև ՁԼՄ-ները, իշխանական և ընդդիմադիր թևերին հարող տարբեր շրջանակներ: Ապատեղեկատվությունն առավելապես վերաբերում է քաղաքականության, ընտրական գործընթացների, առողջապահության, եվրոպական ինտեգրացիայի, անվտանգության, տնտեսական և սոցիալական, էթնիկական ու ազգայնական և այլ ոլորտների՝ դրանք հաճախ տարածվում են անվստահելի աղբյուրներից և միտում ունեն խաթարել հասարակական համախմբվածությունը, վստահությունն ու անվտանգությունը: Ապատեղեկատվության հարթակները բազմազան են. սոցիալական մեդիա, տեղական լրատվամիջոցներ, հաղորդագրությունների հավելվածներ, որոնք սնվում եմ թե ներքին, թե արտաքին քարոզչական աղբյուրներից:

Ավելի խորքային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ապատեղեկատվության տարածումը կապված է նաև մեդիագրագիտության ցածր մակարդակի հետ: Այդ իսկ պատճառով, Հայաստանը, հատկապես, կարևորում է մեդիագրագիտության բարձրացումը՝ պետություն-քաղաքացիական հասարակության կազմակերպություններ-միջազգային գործընկերներ համագործակցության ամրապնդմամբ:

Հարկ է նշել ապատեղեկատվության 3 տեսակների մասին, որոնք անգլերենում առանձնանում են հստակ եզրույթներով (disinformation, misinformation, malinformation): Առաջինն ապատեղեկատվությունն է՝ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, որոնք դիտավորյալ շրջանառվում են որևէ մեկին վնաս հասցնելու նպատակով: Երկրորդը կեղծ տեղեկատվությունն է, որը կեղծ է, սակայն տարածվում է ոչ միտումնավոր որևէ մեկին վնաս տալու համար: Երրորդն այն տեղեկությունն է, որը կեղծ չէ, սակայն օգտագործվում է որևէ մեկին վնաս պատճառելու համար (իրականության չարամիտ տարածում):

2. Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը

Հայաստանում ապատեղեկատվության տարածման դեմ պատշաճ հակազդեցություն որդեգրելու նպատակով մշակվել է Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային ռազմավարություն, որի հայեցակարգն ընդունվել է 2023 թվականի դեկտեմբերին՝ ՀՀ վարչապետի N 1319 – L որոշմամբ:

Ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թվականների ազգային հայեցակարգը, ինչպես նաև դրանից բխող գործողությունների ծրագիրը նպատակ ունեն կանխարգելել, նվազեցնել ու չեզոքացնել ապատեղեկատվության ռիսկերը՝ համախմբելով Կառավարության, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և քաղաքացիների ջանքերը:

Հայեցակարգը ներառում է 3 ռազմավարական ուղղություն.

- Հզորացնել ՀՀ ինստիտուտների կարողությունը՝ ապատեղեկատվությունը կանխելու, հայտնաբերելու, արձագանքելու և վերլուծելու նպատակով,

- Բարելավել փոխգործակցությունն ու մասնավոր հատվածի մոբիլիզացիան,
- Բարձրացնել իրազեկումը և մեդիաազատությունների ու մեդիագրագիտության վերաբերյալ կրթության մակարդակը՝ ձևավորելով ապատեղեկատվության հանդեպ հանրային դիմակայություն:

Փաստաթղթերը մշակել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնի հետ համագործակցությամբ և Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի (CIPE) աջակցությամբ:

Հայեցակարգով սահմանված գործողությունները միտված են պետական մարմինների արագ արձագանքման մեխանիզմի բարելավմանը, հանրության մեդիագրագիտության մակարդակի բարձրացմանը, ապատեղեկատվության տարածման ռիսկերի նվազեցմանը: Այս բոլոր բաղադրիչներով առաջընթացն ակնհայտ է, սակայն հայեցակարգի լիարժեք ազդեցությունը գնահատելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակահատված, քանի որ շատ նախաձեռնություններ դեռևս գտնվում են իրականացման փուլում:

Չնայած դրական արդյունքներին՝ դեռ առկա են մարտահրավերներ՝ կապված իրավական դաշտի ամբողջականացման, սոցիալական մեդիայի վերահսկման և ապատեղեկատվության նոր աղբյուրների հետ, ներառյալ՝ արհեստական բանականության տարածումը:

3. ՀՀ-ԵՄ համագործակցությունը ապատեղեկատվության դեմ պայքարի գործում՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակում

Հայաստանի և Եվրոպական միության միջև համագործակցությունն ապատեղեկատվության դեմ պայքարում ներառում է բազմաթիվ կարևորագույն ուղղություններ, որոնք նախատեսված են Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակում: Համաձայնագրի համապատասխան դրույթներն ուղղված են աջակցելու տեղեկատվական դաշտի կայունությանը, նպաստելու մեդիագրագիտության բարձրացմանը և ապահովելու հասարակական վստահության աճը տեղեկատվական աղբյուրների հանդեպ:

ՀՀ-ԵՄ համագործակցությունը ապատեղեկատվության դեմ պայքարի համատեքստում ներառում է մի շարք ուղղություններ՝ ՀԸԳ համաձայնագրի դրույթների հիման վրա: Հիմնական ուղղություններն են.

1. Ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներ
2. Մեդիագրագիտության խթանում
3. Տեխնիկական և ֆինանսական աջակցություն
4. Համագործակցություն քաղհասարակության և մեդիա կազմակերպությունների հետ
5. Միջազգային փորձի կիրառում
6. Հանրային իրազեկում և հաղորդակցություն, տեխնոլոգիական լուծումների խթանում

Այս բոլոր ուղղությունները միտված են ոչ միայն ապատեղեկատվության նվազեցմանը, այլև Հայաստանի և ԵՄ-ի միջև համագործակցության ամրապնդմանը՝ հիմնված ժողովրդավարական արժեքների վրա:

4. ԵՄ-ի կարգավորումները ապատեղեկատվության դեմ պայքարի գործում

ԵՄ-ն ընդունել է մի շարք կարգավորումներ և ռազմավարություններ՝ ապատեղեկատվության դեմ պայքարելու և տեղեկատվական տարածքի անվտանգությունն ապահովելու նպատակով: Այս կարգավորումները նաև ազդեցություն են թողնում Հայաստանի վրա՝ Եվրամիության և Հայաստանի համագործակցության շրջանակում:

1. **«Թվային ծառայությունների ակտ» (Digital Services Act, DSA, 2022 թ.)**, որը նպատակ ունի ապահովել ավելի թափանցիկ թվային միջավայր՝ սոցիալական մեդիա հարթակներում ապատեղեկատվության տարածումը նվազեցնելու համար: Այն ուղղված է ապահովելու, որ առցանց հարթակները պատասխանատվություն կրեն տարածվող ապատեղեկատվության համար՝ ներգրավելով դրանց վերահսկողության և թափանցիկության մեխանիզմներ:
2. **Ապատեղեկատվության դեմ պայքարի վարքականոններ (Code of Practice on Disinformation, 2022 թ.)**, որի նպատակն է կեղծ լուրերի տարածումը նվազեցնելու նպատակով համագործակցություն ապահովել սոցիալական մեդիա հարթակների և կառավարությունների միջև:
3. **Եվրոպական հանձնաժողովի Ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարություն**, որի նպատակն է մշակել ԵՄ անդամ երկրներում և գործընկեր երկրներում ապատեղեկատվության տարածման դեմ համապարփակ քաղաքականություն:

Այս և ապատեղեկատվության դեմ պայքարին միտված այլ կարգավորումները ներառում են պահանջներ՝ ուղղված ապատեղեկատվության կանխարգելմանը և հեռացմանը՝ կիրառելով տեխնոլոգիական լուծումներ և համագործակցություն կարգավորող մարմինների հետ:

Հայաստանը, լինելով ԵՄ-ի հետ գործընկերության շրջանակում, աստիճանաբար ինտեգրում է ԵՄ ապատեղեկատվության դեմ պայքարի լավագույն փորձը: Այս կարգավորումները ծառայում են որպես ուղեցույց՝ Հայաստանում ավելի թափանցիկ և անվտանգ տեղեկատվական միջավայր ստեղծելու համար: ԵՄ-ի տեխնիկական և ֆինանսական աջակցությունը Հայաստանի համար կարևոր գործիք է ապատեղեկատվության դեմ պայքարում:

5. ԵՄ-ի ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացված ծրագրերն ու դրանց ազդեցությունն ապատեղեկատվության դեմ պայքարի գործում

Վերջին տարիների ընթացքում ԵՄ-ի աջակցությամբ Հայաստանում իրականացվել և շարունակվում են շարք ծրագրեր, որոնք ուղղված են ապատեղեկատվության դեմ պայքարին և մեդիագրագիտության խթանմանը: Այդ ծրագրերի իրականացման գործում ակտիվ դերակատարում ունեն ՔՀԿ-ները: Ծրագրերն ուղղված են հասարակության տարբեր շերտերի (դպրոցականներ, լրագրողներ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների և դպրոցների

մանկավարժներ, ՔՀԿ ներկայացուցիչներ) մեդիագրագիտության զարգացմանը վերապատրաստման դասընթացների միջոցով, անկախ մեդիա խթանմանը, փաստերի ստուգման հարթակների տարածմանը, կրթական ծրագրերի զարգացմանը, տեխնոլոգիական լուծումների խրախուսմանը:

Հատկանշական է Հայաստանում Մեդիագրագիտության շաբաթվա կարևորությունը, որի ֆինանսական աջակիցների թվում է նաև ԵՄ-ն: Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը և ՀՀ կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ամեն տարի հայտարարում են Մեդիագրագիտության շաբաթ Հայաստանում և հրավիրում են ՀՀ բոլոր դպրոցներին, մանկապարտեզներին, բուհերին, գրադարաններին, կրթական և մշակութային կենտրոններին և այլ շահագրգիռ կառույցներին՝ միանալու շաբաթվան:

Շաբաթվա շրջանակում տարբեր կազմակերպությունների համախմբմամբ իրականացվող միջոցառումների շարքը մեջ արձագանք է ստանում և ապահովում թիրախային լսարանի ընդգրկուն մասնակցություն:

ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվում է «Մեդիայի որակի և դիմակայունության նախաձեռնություն» ծրագիրը՝ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի կողմից՝ Երևանի մամուլի ակումբի, Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի, «Միջազգային մեդիա աջակցություն» (IMS) կազմակերպության հետ համատեղ: Ի թիվս այլ նպատակների, ծրագիրը միտված է խթանելու մեդիագրագիտությունը, որպեսզի բովանդակություն սպառողներն առավել հմուտ կողմնորոշվեն լրատվական դաշտում:

Հանրային լրագրության ակումբի ջանքերով և ԵՄ ֆինանսավորմամբ հայերեն է թարգմանվել և տեղայնացվել «Առցանց կենդանաբանական այգի» մանկական գիրքը, ինչպես նաև դասավանդողների համար ապատեղեկատվության դեմ պայքարի և թվային գրագիտության խթանման ուղեցույցը: Այս ռեսուրսները նպատակ ունեն օգնելու երեխաներին ճիշտ կողմնորոշվել համացանցում և ապահով կերպով օգտվել թվային սարքերից, իսկ դասավանդողներին՝ զինված լինել մեդիագրագիտության դասավանդման արդի մեթոդներով և գործիքներով մասնակցային և արդյունավետ անցկացնելու մեդիագրագիտությանն ուղղված դասընթացները:

EUvsDisinfo-ն Եվրամիության կողմից ստեղծված հարթակ է, որը կենտրոնանում է ապատեղեկատվության բացահայտման, վերլուծության և դեմ պայքարի վրա: Այն մեծ դեր ունի ապատեղեկատվության վերլուծության մեթոդներ և նյութեր տարածելու գործում, ինչը կարող է աջակցել Հայաստանում մեդիագրագիտության ծրագրերին: Հարթակը մատուցում է կրթական նյութեր և վերլուծություններ, որոնք կարող են օգտագործվել Հայաստանի լրատվական և կրթական հաստատությունների կողմից: Այն աջակցում է Հայաստանի մեդիագրագիտության, քաղաքականության ձևավորման և տեղեկատվական անվտանգության ոլորտներին, հատկապես՝ ԵՄ-Հայաստան համագործակցության շրջանակում:

Այսպիսով, Հայաստանում ԵՄ-ի կողմից իրականացվող ծրագրերը համապարփակ են և ընդգրկում են հասարակության տարբեր շերտերը՝ մեդիագրագիտության խթանումից մինչև տեխնոլոգիական նորարարությունների ներդրում: Այս ծրագրերը նպաստում են ապատեղեկատվության տարածման դեմ պայքարին և հասարակության դիմադրողականության բարձրացմանը:

ՀՀ-ԵՄ հարաբերությունների համատեքստում քարոզչական խոսույթների տարածումը

Հատկանշական է, որ ԵՄ-ի հետ համագործակցության ընդլայնման դեմ կիրառվող որոշ քարոզչական խոսույթներ երկար պատմություն ունեն, օրինակ՝ նյութապաշտությամբ, միասեռականությամբ, «ավանդական արժեքների» ուրացումով բնութագրվող Արևմուտքի ենթադրյալ բարոյական անկման մասին քարոզչությունը, որն առավել ինտենսիվացել է ԵՄ-ի հետ ասոցացման պայմանագրի վերաբերյալ բանակցությունների շրջանից ի վեր (երբ այն նաև ինտենսիվորեն շրջանառվում էր Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում), սակայն ի հայտ էր եկել Հայաստանում դեռևս 2001 թ. Եվրոպայի խորհրդին անդամակցելու արդյունքում՝ դրա չափանիշների կապակցությամբ ստանձնած որոշ պարտավորությունների պատճառով: Հետաքրքիր է սակայն, որ այդ խոսույթն ավելի երկար պատմություն ունի. 1995 թ., ելույթ ունենալով Ֆրիդրիխ Նաումանի անվան հիմնադրամի Բեռլինում կազմակերպած քննարկմանը, որը նվիրված էր Վարշավայի պայմանագրի նախկին անդամ երկրներում (որոնք այդ տարիներին ասոցացման պայմանագրեր էին կնքում ԵՄ-ի հետ) առկա իրավիճակին, լեհ մտավորական Ադամ Միխնիկը նշել էր՝ «Հետկոմունիստական էթնիկ շովինիզմը հաճախակի փոխլրացվում է կրոնի քաղաքական շահագործմամբ. կրոնը հավակնում է քաղաքական գաղափարախոսության դերին, անգամ գերիշխող պետական գաղափարախոսության դերին: ... Նրանք ընդդիմանում են ԵՄ-ի հետ ավելի սերտ կապերին՝ ԵՄ-ն համարելով նոր Բաբելոն՝ մեղքի և անբարոյականության կենտրոնատեղի, պոռնոգրաֆիայի, աբորտների, հակաբեղմնավորման և ամուսնալուծությունների թագավորություն»:

Ներկայում Հայաստան-ԵՄ համագործակցության բոլոր ոլորտները շարունակում են մնալ քարոզչության թիրախում՝ լինի Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված գործողությունների բնույթը (օրինակ՝ «այդ համագործակցությունն ուղղված է Ռուսաստանի դեմ», «հատկացվող նյութական օժանդակությունը Հայաստանի արտաքին քաղաքական վեկտորի փոփոխության գինն է», և այլն), ԵՄ դիտորդական առաքելության գործունեությունը, վիզաների ազատականացման մասին երկխոսության ընթացքը և այլն. պետք է ակնկալել, որ «Եվրամիությանը ՀՀ-ի անդամակցության գործընթացի մեկնարկի մասին» օրինագծին Կառավարության կողմից հավանություն տալը և ԱԺ առաջիկա նստաշրջանի ընթացքում դրա ընդունման հավանականությունը կհանգեցնի քարոզչական նոր ինտենսիվ ալիքի:

ԵՄ դիտորդական առաքելության գործունեության, ինչպես նաև միջազգային համագործակցության այլ դրսևորումների, մասնավորապես՝ Հայաստան-ԵՄ-ԱՄՆ բարձր մակարդակի հանդիպման մասին ռուսական և ադրբեջանական քարոզչության բնույթի և մեթոդների ակնհայտ համընկնումը վերջերս մատնանշվեց նաև Ատլանտյան խորհրդի Թվային հետաքննությունների հետազոտական լաբորատորիայի հետազոտությունում: Մեթոդների, որոշ չափով նաև խոսույթների համընկնումն ակնհայտ է նաև Ֆրանսիայի կողմից «նեոգաղութատիրական» քաղաքականության մասին ադրբեջանական քարոզչության, ինչպես նաև ԵՄ-ի, Ֆրանսիայի, կամ ԱՄՆ-ի կողմից «պատերազմ հրահրելու» մասին պնդումների դեպքում:

Ավելին, «պատերազմ հրահրելու» մասին քարոզչությունը՝ «հավաքական Արևմուտքն ընդդեմ Ռուսաստանի» համատեքստում, նկատելի է նաև Վրաստանում՝ նախընտրական և հետընտրական շրջանում: Հատկանշական է նաև, որ 2024 թ. հոկտեմբերին Կազանում կայացած ԲՐԻԿՍ-ի գագաթնաժողովին նախորդած շուրջ

երկու ամսվա ընթացքում Հայաստանի ԲՐԻԿՍ-ին անդամակցելու անհրաժեշտության մասին քարոզչությունը ևս ուղեկցվում էր «Ռուսաստանի և Չինաստանի կողմից գլոբալ Հարավն առաջնորդելու» և «հավաքական Արևմուտքին» դիմադրելու կարևորության մասին քարոզով:

Միևնույն ժամանակ, որոշ քարոզչական խոսույթներ հարմարեցվում են տվյալ պահին առկա կարիքներին՝ հատկապես որոշ առանցքային իրադարձությունների կապակցությամբ: Այսպես՝ ռուսական քարոզչության և այն Հայաստանում տարածողների կողմից տարիներ շարունակ բազմիցս կրկնվել էր այն թեզը, որ ԵՄ-ն և նրա անդամներն՝ անգամ Ֆրանսիան և Գերմանիան, ինքնուրույն չեն և «ներքաշվել են Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ» ԱՄՆ-ի կողմից: Դ. Թրամփի՝ ԱՄՆ նախագահ ընտրվելու կապակցությամբ նույն շրջանակներն «ինքնուրույնության բացակայությունն» արդեն դրական երանգներով էին ներկայացնում:

Եզրակացություն և մարտահրավերներ

Ապատեղեկատվության դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ԵՄ համագործակցությունը շարունակում է մնալ կարևոր գործիք՝ Հայաստանի տեղեկատվական դաշտի կայունությունն ու թափանցիկությունն ապահովելու համար: Ներքին քաղաքականության և միջազգային աջակցության համադրված ջանքերը կարող են ավելի մեծ ազդեցություն ունենալ ապատեղեկատվության դեմ պայքարի գործում: Այնուամենայնիվ, ապագայի գլխավոր մարտահրավերներն են նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ deepfake տեխնոլոգիաների զարգացումը, արհեստական բանականությամբ աշխատող գործիքների տարածումը, ինչպես նաև քաղաքական բևեռացումն ու հասարակական վստահության պակասը տեղեկատվական աղբյուրների նկատմամբ:

Հայաստանը պետք է շարունակի իր համագործակցությունը ԵՄ-ի հետ՝ զարգացնելով և ամրապնդելով ապատեղեկատվության դեմ պայքարի իրավական, տեխնոլոգիական և կրթական մոտեցումները: